Շուշանիկ Կուրղինյան

Գիշեր 1

Գիշերը աստղոտ դյութել է հոգիս . . .
Հիվանդ եմ լուսնի այն քնքուշ թախծով,
Որ միտքս գերած՝ հպվել է կրծքիս,
Շուրջս բաց արել երազանքի ծով:

Աստղերը այնպես կախարդ են այսօր .
Ճիշտ կնոջ նման ալիքն է ժպտում . . .
Չինգանաների խարույկը բոսոր
Կամակոր հույզեր ծնեց իմ սրտում:

Նվագն անբարբառ, կես գիշերային
Ջեփյուռն է արբած տարածում իր հետ—
Որ անմահ սիրո խորհուրդն է խորին,
Որ կա, կմնա հավերժ ու հավետ . . .

Հե՛յ, զգույշ այդտեղ . . . սիրտ կա կրծքիս տակ . . .
Գիշերն է չքնաղ . . . ես սիրել գիտեմ,
Աստղոտ գիշերում— դևն է հրեշտակ . . .
Աստղոտ գիշերում— դժոխքն է եդեմ:

1908 թ . 18 հունիսի